| | | | |
|---|---|---|---|
| | | օգտագործողի ցանկության դեպքում պետք է հնարավորություն տա ներբեռնել ցանկացած տիպի էլէկտրոնային ֆայլեր, որոնք պետք է պահվեն մեծ քանակի ֆայլերի շտեմարանային հատուկ պահուստներում:<br>Համակարգը գույքի գրանցման ժամանակ օգտագործողի համար պետք է ստեղծի հնարավորություն տեսնել գրանցման ենթակա շարժական գույքի նկատմամբ արդեն գրանցված, փոփոխված և դադարած գրառումները, որը ծրագիրը կիրականացնի ավտոմատ կերպով գրանցման ենթակա շարժական գույքի բնութագրիչ հատկանիշների՝ էլեկտրոնային շտեմարանում առկա տվյալների հետ նույնականացման միջոցով: Նույնականացումը կիրականացվի խմբագրիչում մուտքագրված մի խումբ դաշտերի խմբերի հիման վրա: Գույքի գրանցման ժամանակ համակարգը պետք է բացահայտի նաև ոչ նույնական, բայց որոշակի նմանության գործակցի շեմից բարձր նման շարժական գույքերը: Նույնականացման և նմանության վերլուծության արդյունքում համակարգը պետք է ցուցադրի այդ գույքի նկատմամբ այլ անձանց իրավունքները օգտագործողին, գույքի գրանցումը իրականացնող անձին:<br><br>**2.2. Շարժական գույքը գրանցող անձիք, անձնական էլեկտրոնային** | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | **գրասենյակ**<br>Շարժական գույքը գրանցող անձիք դրանք համակարգի կողմից ունիֆիկացված, համակարգ մուտք գործող անձիք են, որոնք տվյալների բազայում պարունակում են իրենց բնութագրող ունիկալ դաշտերի համախումբ, էլեկտրոնային ստորագրություն, անուն և գաղտնաբառ: Վեբ պորտալում շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունք գրանցող անձը կունենա անձնական էլեկտրոնային գրասենյակը (այսուհետ՝ ԱԷԳ), որտեղից անձը էլեկտրոնային մատյանների միջոցով կարող է տեսնել իր կողմից կատարած գրանցումները և իր կողմից գրանցված շարժական գույքի ապահովված իրավունքների հետ կապված այլ տեղեկատվություններ, հաղորդումներ և այլ անձանց գրանցումներ: ԱԷԳ-ից օգտագործողը կարող է իրականացնել ինչպես մեկ ապահովված իրավունքի, այնպես էլ միաժամանակ փաթեթային եղանակով մի խումբ ապահովված իրավունքների գրանցում: Համակարգը պետք է հնարավորություն տա ապահովված իրավունքների մասին տեղեկատվությունը վերբեռնել ֆայլից Excel, CSV, XML ֆորմատներից: Այս ֆայլերի օրինակելի ձևերը համակարգը պետք է ավտոմատ գեներացնի անձի կողմից տրված շարժական գույքի տեսակների համար համապատասխան տրված ֆորմատներով: | |

Համակարգը ներբեռնումը պետք է իրականացնի իր կողմից դինամիկ ձևով տրամադրված օրինակելի ձևերի հիման վրա:

ԱԷԳ-ը օգտագործողի համար հնարավորություն է ապահովելու տեսնել իր կողմից շարժական գույքի նկատմամբ գրանցված ապահովված իրավունքները, դրանցում կատարված փոփոխությունները:

Օգտագործողը պետք է կարողանա իրականացնել փնտրումներ և ֆիլտրումներ գրանցումների մատյաններում:

**2.3. Գույքային իրավունքներ և դրանց հիմքերը**

Սույն տեխնիկական առաջադրանքի տրամաբանության գույքային իրավունքներ են հանդիսանում շարժական գույքի նկատմամբ պարտատիրոջ գրանցած ապահովված իրավունքները ինչպիսիք են, օրինակ, մեկ տարի և ավել ժամկետով կնքված շարժական գույքի վարձակալության իրավունք, կոմիսիայի առարկա շարժական գույքի նկատմամբ իրավունքները, շարժական գույքի լիզինգի պայմաններից ծագող վարձակալության իրավունքները, գրավ, հիփոթեք, փոխառություն և այլն:

Էլեկտրոնային համակարգը պետք է հնարավորություն տա օգտագործողին ցանկության դեպքում գրանցամատյան մուտքագրել շարժական գույքի նկատմամբ

| | | | |
|---|---|---|---|
| | | ապահովված իրավունքների գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի էլէկտրոնային տարբերակները: | |
| | Փուլ 2-րդ | **2.4. Շարժական գույքի և իրավունքի գրանցման, փոխանցման և այլ գործընթացներ**<br>Համակարգը պետք է տրամադրի խմբագրիչ, որի մեջ պարզ վիզուալ ինտերֆեյսով պետք է կառուցվի գործընթացի գործողությունների կատարման հաջորդականությունը: Ամեն մի գործողության համար խմբագրիչը պետք է ավտոմատ ստեղծի տվյալների մուտքագրման պատուհաններ: Ամեն մի գործողության համար, մուտքագրված տվյալների վերլուծման, մշակման և գրանցման համար պետք է կառուցվեն առանձնացված ծրագրային ապահովումներ:<br>Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի գրանցման գործընթացն ապահովելու համար ծրագիրը պետք է հնարավորություն ստեղծի օգտագործողի համար գրանցամատյանում առնվազն ներառելու "Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման մասին" ՀՀ օրենքի 17-22-րդ հոդվածներով նախատեսված | **46500000**<br>**(քառասունվեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ** |

| | | | |
|---|---|---|---|
| | | տեղեկատվությունը իրար հաջորդող կամ փոփոխող գործողությունների միջոցով:<br><br>**2.5. Այլ ռեգիստրներից գույքային իրավունքների գրառումների հավաքագրումը**<br>Համակարգը պետք է հնարավորություն ունենա աշխատելու խմբագրիչում նկարագրված ինֆորմացիոն աղբյուրներ հանդիսացող այլ ռեգիստրների և/կամ համակարգերի հետ, ինչպիսիք են, օրինակ, բնակչության պետական ռեգիստրը, իրավաբանական անձանց պետական ռեգիստրը, "Ճանապարհային ոստիկանություն" ծառայության էլեկտրոնային ռեգիստրը, ԴԱՀԿ ծառայության համակարգը, նոտարական համակարգը: Ընդ որում, համակարգը պետք է ապահովի էլեկտրոնային գրանցամատյանում գրառված տվյալներում կատարված փոփոխությունների ինքնաշխատ կերպով արդիականացումը:<br>Համակարգը պետք է տրամադրի տեղեկատվության աղբյուր հանդիսացող այլ ռեգիստրներից ստացված տեղեկատվության, դրանցում առկա հնարավոր սխալների ցուցադրման, ուղղումների կատարման, ընդունման լիարժեք կամ մասնակի հաստատման և կենտրոնական հիմնական բազա ներմուծման գործառույթները ապահովող մոդուլներ: | |

| | | | |
|---|---|---|---|
| | | Համակարգը պետք է ունենա ընդհանուր փաթեթային մուտքագրումները ցուցադրող dashboard, որում պետք է երևա ընդհանուր վիճակագրական տվյալներ, ստացված փաթեթների քանակի, ըստ ռեգիստրների, ըստ ստացման օրերի և ընթացիկ պրոցեսինգի վերաբերյալ:<br><br>**Համակարգի անվտանգության ապահովումը**<br>Տվյալների կենտրոնը և կենտրոնի հետ աշխատող ներքին գրասենյակի աշխատանքային տեղերի համակարգիչները պետք է կապ չունենան ինտերնետային ցանցի հետ, այլ պետք է աշխատեն առանձին լոկալ ցանցի շրջանակներում: Տվյալների կենտրոնում պետք է հավաքվի առանձին լոկալ ցանց, որը կապակցելու է իրար սերվերային համակարգիչները: Համակարգի տվյալների կենտրոնը պետք է ունենա տեղեկատվության մուտքի և ելքի կետեր, որոնք են՝<br>• վեբ ինտերֆեյս օն-լայն ձևաչափով շարժական գույքի գրանցման և անձնական էլեկտրոնային գրասենյակի գործառույթները ապավման նպատակով,<br>• ներքին գրասենյակի լոկալ ցանց,<br>• այլ ռեգիստրներից փաթեթների ստացման համար նախատեսվող | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | ամեն մի ռեգիստրի համար համապատասխան էլեկտրոնային թղթապանակներ:<br><br>Ներքին գրասենյակի համար պետք է կառուցվի լոկալ ցանց, որը լինելով փակ չպետք է ունենա ինտերնետային ցանցին միացում ֆիզիկական մակարդակում: Գրասենյակի ցանցը ունենալու է կապ տվյալների կենտրոնի համակարգիչներից միայն մեկի հետ առանձին ցանցային քարտի միջոցով, որտեղից հասանելի պետք է լինի միայն “https” բարձր անվտանգությամբ պրոտոկոլը ապահովող պորտը:<br><br>Այլ ռեգիստրներից ստացված փաթեթների համար տրամադրվում է մեկ “https” բարձր անվտանգությամբ պրոտոկոլը ապահովող պորտը որտեղից ստացված փաթեթները տեղակայվում են հատուկ առանձնացված էլեկտրոնային թղթապանակի մեջ, բացված Linux օպերացիոն համակարգում մի օգտագործողի կողմից միայն կարդալու իրավունքով, մյուսին միայն գրելու իրավունքով:<br><br>Գրանցումը իրականացնող օգտագործողները նույնպես պետք է օգտվեն “https” բարձր անվտանգությամբ պրոտոկոլը ապահովող պորտից, մուտք գործեն համակարգ իրենց անունով և գաղտնաբառով և մեկանգամյա | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | օգտագործվող լրացուցիչ գաղտնաբառով, որը կստանան ծրագրավորողների կողմից հատուկ տրված քարտերով կամ սարքերով:<br><br>**Ապահովված իրավունքների գրանցում**<br>Ստորև ներկայացնում ենք նախնական տարբերակով գույքային իրավունքի գրանցման գործընթացի սցենարի օրինակ, իրականացվող գործողությունների հաջորդականություն.<br>1. Ընտրել «Գրանցում» կոճակը:<br>2. Ընտրել «Նոր գրանցում» կոճակը ցանկից:<br>3. Նոր էջից սեղմել «Լրացնել նոր դիմում» կոճակը:<br>4. Նոր էջից ընտրել առաջարկվող տարբերակներից մեկը.<br>1) - Իրավաբանական անձ, կամ<br>- Ֆիզիկական անձ<br>2) - Անձնական օգտագործման շարժական գույք<br>- Ձեռնարկատիրական գործունեության շարժական գույք<br>3) - Ապահովված իրավունքը ստեղծվել է մինչև տվյալ գրանցումը<br>- Ապահովված իրավունքը ստեղծվելու է տվյալ գրանցումից հետո: | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | 5. Եթե 4-րդ կետի 1-ին ենթակետով ընտրվել է «**Իրավաբանական անձ**» տարբերակը, նշվում է որ տվյալ դիմումը ներկայացվում է լիազոր մարմին, ապա լրացվում է հետևյալ տեղեկատվությունը.<br>1) Իրավաբանական անձի լրիվ անվանումը,<br>2) գրանցման համարը (*գրանցման համարը ինքնաշխատ կերպով ստուգվում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների բազայի հետ*),<br>3) գտնվելու վայրը,<br>4) Կոնտակտային տվյալներ*.<br>▪ Կոնտակտային անձի անուն<br>▪ հեռախոսահամար<br>▪ էլ. փոստի հասցե<br>▪ *հասցե*<br>▪ *քաղաք*<br>▪ *փոստային կոդ*<br>▪ *երկիր:***<br>* *ենթակա չէ պարտադիր լրացման, քանի որ օրենքով նման պահանջ չկա:*<br>** *շեղատառով նշված կոնտակտային տվյալները հասանելի չեն դարձվում* | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | *կայքէջում և օգտագործվում են միայն համակարգի ներքին գործառույթների իրականացման համար: Միաժամանակ, տվյալ ծանուցումների հասցեն ենթակա է հետագայում փոփոխման, այդպիսի փոփոխության կարիքի դեպքում:*<br><br>6. Եթե 4-րդ կետի 1-ին ենթակետով ընտրվել է «**Ֆիզիկական անձ**» տարբերակը, նշվում է որ տվյալ դիմումը ներկայացվում է լիազոր մարմին, ապա լրացվում է հետևյալ տեղեկատվությունը.<br>1) դիմողի անունը, ազգանունը,<br>2) ապահովված անձի (պարտատիրոջ) անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները, հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը,<br>3) բնակության կամ հաշվառման հասցեն,<br>4) Կոնտակտային տվյալներ*.<br>▪ հեռախոսա համար<br>▪ էլ. փոստի հասցե<br>▪ *հասցե*<br>▪ *քաղաք*<br>▪ *փոստային* | |

| | | | |
|---|---|---|---|
| | | *կող*<br>▪ *երկիր:***<br>* *ենթակա չէ պարտադիր լրացման, քանի որ օրենքով նման պահանջ չկա:*<br>** *շեղատառով նշված կոնտակտային տվյալները հասանելի չեն դարձվում կայքէջում և օգտագործվում են միայն համակարգի ներքին գործառույթների իրականացման համար: Միաժամանակ, տվյալ ծանուցումների հասցեն ենթակա է հետագայում փոփոխման, այդպիսի փոփոխության կարիքի դեպքում:*<br><br>7. «Շարժական գույքի տեսակ» էջ, որում ընտրվում է շարժական գույքի հետևյալ տեսակների ցանկի ենթակետերից մեկը՝<br>1) նյութական շարժական գույք,<br>2) գույքային իրավունքներ,<br>3) մտավոր սեփականություն,<br>4) ֆինանսական.<br>• դրամական միջոցներ<br>• արժեթղթեր:<br>8. Առավելագույնը 500 նիշի չափով գույքի նկարագրության համար նախատեսված դաշտ:<br>9. Գումարի չափի մասին նշում:<br>10. Գրանցման ժամկետը. ընտրել 3 տարբերակներից մեկը.<br>1) Օրացույցով լրացման ենթակա դաշտ,<br>2) ժամկետ չի նախատեսվում:<br>11. Լրացուցիչ տեղեկություններ. կարող են ընտրվել հետևյալ տարբերակներից մի քանիսը. | |

- ֆինանսավորմամբ ձեռք բերվող շարժական գույք
- գույքացանկի տարբերակով գրանցվող գույք
- տվյալ գրանցումը կապված է մեկ այլ գրանցման հետ

12. Պարտապան.

1) - Իրավաբանական անձ, կամ
   - Ֆիզիկական անձ

13. Եթե 12-րդ կետի 1-ին ենթակետով ընտրվել է «**Իրավաբանական անձ**» տարբերակը, ապա լրացվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) Իրավաբանական անձի լրիվ անվանումը,
2) գրանցման համարը (*գրանցման համարը ինքնաշխատ կերպով ստուգվում է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների բազայի հետ*),
3) գտնվելու վայրը,
4) պարտապանի համաձայնության առկայության մասին նշում,
5) Կոնտակտային տվյալներ.*
   - հեռախոսա համար
   - էլ. փոստի հասցե

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | լրացվում է հետևյալ տեղեկատվությունը.<br>1) դիմողի անունը, ազգանունը,<br>2) պարտապանի անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները, հանրային ծառայության համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը,<br>3) բնակության կամ հաշվառման հասցեն,<br>4) Կոնտակտային տվյալներ.*<br>▪ հեռախոսահամար<br>▪ էլ. փոստի հասցե<br>▪ _հասցե_<br>▪ _քաղաք_<br>▪ _փոստային կոդ_<br>▪ _երկիր:**_<br><br>_* ենթակա չէ պարտադիր լրացման, քանի որ օրենքով նման պահանջ չկա:_<br>_** շեղատառով նշված կոնտակտային տվյալները հասանելի չեն դարձվում կայքէջում և օգտագործվում են միայն համակարգի ներքին գործառույթների իրականացման համար: Միաժամանակ, տվյալ ծանուցումների հասցեն ենթակա է հետագայում փոփոխման, այդպիսի_ | |

| | | | |
|---|---|---|---|
| | | *փոփոխության կարիքի դեպքում:*<br><br>15. Դիմումին կցվող փաստաթղթերի ներբեռնում՝ առկայության դեպքում:<br>16. Դիմումի էլեկտրոնային ստորագրում:<br>17. Վճարում:<br>18. Վճարումը հաստատող էջ:<br>19. Մեկ ծանուցում ուղարկվում է ապահովված անձին և հիշեցվում, որ ապահովված անձը իր հերթին պարտավոր է ծանուցել պարտատապանին տվյալ գրանցման մասին:<br>20. Դիմումում ինքնաշխատ կերպով նշվում է դիմումի կազմման ամսաթիվը և ժամը: | |

| **Ծառայության մատուցման ժամկետը** | |
|---|---|
| Սկիզբը | Ավարտը |
| **«09» հուլիսի 2015թ.** | **«01» հոկտեմբերի 2015թ.** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ**
**Ք. Երևան, Հալաբյան 41ա**
**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011002764**
**ՀՎՀՀ 02506264**

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ**
**ք. Երևան, Դ. Անհաղթի 23/22**
**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1570003653770100**
**ՀՎՀՀ 01555207**
**էլ. հասցե՝ info@masys.am**
**Հեռ. (010)209100**

(ստորագրություն)

*Հավելված 2*
*<<09>>______07______ 2015 թ. կնքված*
*N ԴԾԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3 ծածկագրով գնման պայմանագրի*

# ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՌԵԳԻՍՏՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մատակարարման նկարագիրը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2015թ. պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | **Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների ռեգիստրի և գործընթացների ավտոմատացված կառավարման միասնական համակարգի ստեղծման ծառայություններ** | - | - | - | - | - | - | **91500000** | **91500000** | **91500000** | **91500000** | **91500000** | **91500000** | **91500000 (իննսունմեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ**
**Ք. Երևան, Հալաբյան 41ա**
**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011002764**
**ՀՎՀՀ 02506264**

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ**
**ք. Երևան, Դ. Անհաղթի 23/22**
**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1570003653770100**
**ՀՎՀՀ 01555207**
**էլ. հասցեն՝ info@masys.am**
**Հեռ. (010)209100, 0(91)436557**

(ստորագրություն)

Հավելված 3
<<09>>______07______ 2015 թ. կնքված
N ԴԾԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3 ծածկագրով գնման պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ<br>Ք. Երևան, Հալաբյան 41ա<br>ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011002764<br>ՀՎՀՀ 02506264 | «ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ<br>ք. Երևան, Դ. Անհաղթի 23/22<br>«Ամերիաբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1570003653770100<br>ՀՎՀՀ 01555207<br>էլ. հասցեն՝ info@masys.am<br>Հեռ. (010)209100 (093)435557 |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ պետության կարիքների համար շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների ռեգիստրի եվ գործընթացների ավտոմատացված կառավարման միասնական համակարգի ստեղծման ծառայությունների մատուցում

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ ԴԾԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3

Պատվիրատուն՝ ի դեմս Արմեն Գևորգյանի և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս ______________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ________________<br>ստորագրություն | ________________<br>ստորագրություն |
| ________________<br>ազգանուն, անուն | ________________<br>ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*<<01>> 07 2015 թ. կնքված*
*N ԴՇԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3 ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ **Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմն** ի դեմս աշխատակազմի ղեկավար **Արմեն Գևորգյանի** (այսուհետ՝ Պատվիրատու) և **«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Մանուկյանի** (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ----------------« » -ին կնքված ԴՇԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. --------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

ազգանուն, անուն

ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N ԴԾԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3

ք. Երևան <<09>> 07 2015թ

**«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Մանուկյանի** (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<**Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի**>> (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<**շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների ռեգիստրի եվ գործընթացների ավտոմատացված կառավարման միասնական համակարգի ստեղծման ծառայությունների**>> ձեռքբերման **«ԴԾԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3»** ծածկագրով **ՇՀ** գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝ **«ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ**

Ընկերության հասցեն՝ **ք. Երևան, Դ. Անհաղթի 23/22**

Ընկերության բանկի անվանումը՝ **«Ամերիաբանկ» ՓԲԸ**

Ընկերության՝ **Հ/Հ 1570003653770100**

Ընկերության՝ **ՀՎՀՀ 01555207**

տնօրեն՝ ____________________

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ____________________

(ստորագրություն)

Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ Nº

"____"______20___ թ.

| | |
|---|---|
| Վճարող՝ «ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ<br>ՀՎՀՀ 01555207 | ԴԵԲԵՏ \| ԳՈՒՄԱՐ (ԱՐԺՈՒՅԹԸ) **9150000.0** |
| Վճարողի բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1570003653770100 | ԿՐԵԴԻՏ \| ԳՈՒՄԱՐ (ԲԱՌԵՐՈՎ) |
| Շահառու՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ<br>ՀՎՀՀ **-02506264** | Ինը միլիոն հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ |
| Շահառուի բանկը՝ ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան | հշ.N 900005000758 |

Գումարը բառերով Ինը միլիոն հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ

Գնման գործընթացի ծածկագիրը՝ ԴԾԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3

Վճարման նպատակը՝ թիվ ԴԾԻԳ-ՇՀԾՁԲ-15-11/6-3 գնման պայմանագրի ապահովում

Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

Կից____էջ

| | |
|---|---|
| Շահառուի ստորագրությունները<br>/________________<br>/________________<br>Կ.Տ. | Վճարողի ստորագրությունները<br>/________________/<br>/________________/<br>Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>/________________/<br><<__>>______20__թ.<br>Կ.Տ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>/________________/<br><<__>>______20__թ.<br>Կ.Տ |